**Հայաստանի Հանրապետությունում Գերմանական միջազգային համագործակցության Ընկերության անունից աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի պայմանագրային ընդհանուր պայմաններ («տեղական պայմաններ»)**

(2022թ. մարտի դրությամբ)

## 1. Աշխատանքի և ծառայությունների մատուցման մասին ընդհանուր դրույթներ

### 1.1. Կիրառելի իրավունքը և իրավազորությունը

Պայմանագիրը կարգավորվում է Հայաստանի Հանրապետռության իրավունքով: Կապալառուի գործունեության կամ վճարման ընդհանուր պայմանները կիրառելի չեն: Իրավազորության վայրը Հայաստանի Հանրապետությունն է: GIZ-ը կարող է նաև վարույթ հարուցել կապալառուի դեմ իրավասու դատարանում կապալառուի գտնվելու, գործունեության կամ քաղաքացիության վայրում:

### 1.2 Ձև

Պայմանագիրը, ցանկացած փոփոխություն կամ լրացում և բոլոր էական հաղորդակցությունները պետք է լինեն գրավոր, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը այլ պայմանավորվածություններ են ձեռք բերել կամ օրենքով սահմանված է ավելի խիստ ձևաչափ:

### 1.3 Աշխատանքի և ծառայությունների որակ

Աշխատանքը և մատուցվող ծառայությունները պետք է համապատասխանեն ճանաչված չափանիշներին և ընդունված տեխնոլոգիական ընդհանուր կանոններին, ինչպես նաև տեխնիկական առաջադրանքին: Դրանք պետք է լինեն գերազանց որակի:

### 1.4 Շրջանակային պայմաններ և կայունություն

#### 1.4.1 Օրենսդրական դրույթների պահպանում

Աշխատանքները կատարելիս և ծառայությունները մատուցելիս կապալառուն պետք է հետևի բոլոր կիրառելի իրավական դրույթներին, կարգադրություններին և պաշտոնական կանոնակարգերին, ներառյալ հարկային օրենսդրության դրույթները:

#### 1.4.2 Բնապահպանական և սոցիալական չափանիշներ և մարդու իրավունքներ

Աշխատանքները կատարելիս և ծառայությունները մատուցելիս կապալառուն պետք է հետևի բոլոր գործող ազգային և միջազգային բնապահպանական օրենքներին, նվազագույնի հասցնի իր ջերմոցային գազերի արտանետումները և խուսափի բոլոր այն գործողություններից, որոնք կարող են մեծացնել բնակչության և/կամ էկոհամակարգերի խոցելիությունը:

Աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ամբողջ ընթացքում Կապալառուն պարտավոր է երաշխավորել մարդու իրավունքների հարգումը, երեխաների պաշտպանությունը, ցանկացած և բոլոր ձևերի բռնության, չարաշահման և շահագործման կանխարգելումը, էթնիկ ծագման կամ ժառանգության, կրոնական համոզմունքների, տարիքի, գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման կամ հաշմանդամության ցանկացած տեսակի հիման վրա որևէ խտրականության բացառումը, սեռերի համար գենդերային հավասարության խթանումը միջազգային չափանիշներին և բազմակողմ համաձայնագրերին (մասնավորապես՝ մարդու իրավունքների միջազգային կոնվենցիաներին) համապատասխան:

Կապալառուն պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի աշխատանքային միջավայրում սեռական ոտնձգությունները կանխելու համար և պետք է ձեռնպահ մնա ատելություն կամ բռնություն հրահրելուց, ինչպես նաև որևէ օբյեկտիվորեն չհիմնավորված

խտրականությունից կոնկրետ անհատի կամ անհատների խմբի նկատմամբ:

### 1.4.3 Աշխատանքային ստանդարտներ

Պայմանագիրը կատարելիս կապալառուն պարտավոր է հետևել աշխատանքի հիմնարար սկզբունքներին և իրավունքներին՝ համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) 1998 թվականի հունիսի 18-ի հռչակագրի (միավորումների ազատություն, կոլեկտիվ բանակցությունների իրավունք, հարկադիր կամ պարտադիր աշխատանքի բոլոր ձևերի վերացում, երեխաների աշխատանքի արդյունավետ վերացում և խտրականության վերացում աշխատանքի և զբաղմունքի նկատմամբ):

Մասնավորապես, կապալառուն պարտավոր է պայմանագրի կատարման ընթացքում պահպանել ԱՄԿ-ի աշխատանքային հիմնական չափորոշիչները (թիվ 29, 87, 98, 100, 105, 111, 138 և 182 կոնվենցիաներ) կիրարկող ՀՀ գործող օրենսդրության դրույթները: Եթե ՀՀ-ն չի վավերացրել մեկ կամ մի քանի հիմնական աշխատանքային ստանդարտներ կամ դրանք չեն կիրարկվել ազգային օրենսդրության մեջ, կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ այն կանոնակարգերին, որոնք հետապնդում են նույն նպատակը, ինչ աշխատանքային հիմնական ստանդարտները:

### 1.4.4 Պայմանագրի կատարման ընթացքում անցանկալի բացասական հետևանքներից խուսափելը

Կապալառուն պարտավոր է իր աշխատանքը կատարել և ծառայությունները մատուցել այնպես, որ խուսափի կամ նվազագույնի հասցնի անցանկալի բացասական հետևանքները շրջակա միջավայրի, կլիմայի պաշտպանության, կլիմայի փոփոխությանը հարմարվելու միջոցառումների, մարդու իրավունքների, փխրուն, կոնֆլիկտներով և բռնությամբ զուգակցվող իրավիճակների և գենդերային հավասարություն վրա՝ համապատասխան մեղմացնող միջոցառումների իրականացման միջոցով: Ինչ վերաբերում է գենդերային հավասարությանը, կապալառուն նաև պարտավորվում է օգտագործել ցանկացած ներուժ՝ գենդերային հավասարությունը խթանելու համար:

### 1.4.5 Խախտումների հետևանքները

Եթե կապալառուն խախտում է 1.4 կետով սահմանված պարտավորություններից որևէ մեկը, և արդյունքում GIZ-ը լուծում է պայմանագիրը, ապա այդպիսի դադարեցման համար պատասխանատու է կապալառուն:

## 1.5 Անաչառությունը

### 1.5.1 Շահերի բախում

Կապալառուն չպետք է ներգրավվի սույն պայմանագրի հետ կապված որևէ շահերի բախման մեջ: Շահերի բախումը կարող է առաջանալ մասնավորապես՝ առևտրային շահերի, քաղաքական պատկանելիության կամ ազգային կապերի, ընտանիքի անդամների կամ ընկերների հետ հարաբերությունների և այլ կապերի և շահերի հետևանքով: Կապալառուն պարտավորվում է մասնավորապես.

ա) պայմանագրի հետ կապված երրորդ կողմերից որևէ լրացուցիչ վարձատրություն չընդունել,

բ) պայմանագրի գործողության ընթացքում չընդունել այլ պատվերներ, որոնցում ակնկալվում է շահերի բախում՝ պայմանավորված պատվերի բնույթով կամ երրորդ կողմի հետ կապալառուի անձնական կամ ֆինանսական կապերի պատճառով, բացառությամբ եթե չի ստացել դրա վերաբերյալ GIZ-ի նախնական համաձայնությունը,

գ) չկնքել սույն պայմանագրի հետ կապված որևէ պայմանագիր այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ, որոնց հետ կապալառուն ունի անձնական կամ ֆինանսական կապեր, բացառությամբ եթե չի ստացել դրա վերաբերյալ GIZ-ի նախնական համաձայնությունը:

Կապալառուն պարտավորվում է անհապաղ բացահայտել GIZ-ին ցանկացած հանգամանք, որը կարող է հանդիսանալ շահերի բախում կամ կարող է հանգեցնել դրան: Այնուհետև կապալառուն պետք է խորհրդակցի GIZ-ի հետ, թե ինչ գործողություններ պետք է ձեռնարկվեն: Եթե նման դեպքում կողմերը չեն կարողանում համաձայնության գալ, և GIZ-ը լուծում է

պայմանագիրը, ապա այպիդսի լուծման պատասխանատվությունը կրում է կապալառուն:

### 1.5.2 Անաչառության քաղաքականություն

Կապալառուն չպետք է ուղղակիորեն կամ երրորդ կողմի միջոցով առաջարկի կամ շնորհի որևէ նվեր կամ առավելություն, ընդունի կամ պահանջի այդպիսի նվերներ կամ առավելություններ իր կամ երրորդ անձի համար՝ կապված պայմանագրի շնորհման և/կամ պայմանագրի իրականացման հետ՝ ներառյալ խթանող վճարները:

Կապալառուն չպետք է համաձայնի մրցակցության որևէ սահմանափակման մեկ կամ մի քանի այլ ընկերությունների հետ:

Կոռուպցիայի ցանկացած ձև արգելված է: Կապալառուն պետք է համապատասխան և ողջամիտ միջոցներ ձեռնարկի կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարելու համար: Կապալառուն պետք է նաև անհապաղ զեկուցի GIZ-ի ազդարարման համակարգին ցանկացած հաստատված դեպքի և կոռուպցիայի և/կամ գույքային իրավախախտումների վերաբերյալ լուրջ կասկածների մասին, ինչպիսիք են պայմանագրի իրականացման հետ կապված խարդախությունը, յուրացումը և վստահության խաթարումը: Ազդարարման համակարգի հետ կարելի է կապ հաստատել հետևյալ հարթակով whistleblower portal, GIZ-ի Անաչառության Խորհրդատուի (integrity-mailbox@giz.de) կամ արտաքին օմբուդսմենի (ombudsman@ra-js-de) => **www.giz.de/en • About GIZ • Compliance • Whistleblowing.**

### 1.5.3 Խախտումների հետևանքները

Եթե կապալառուն խախտում է արգելքներից մեկը կամ չի կատարում 1.5 կետում նշված պարտավորություններից մեկը, և արդյունքում GIZ-ը լուծում է պայմանագիրը, ապա այպիդսի լուծման պատասխանատվությունը կրում է կապալառուն: Եթե կապալառուն չկատարի 1.5 Բաժինով նախատեսված պարտավորությունը, GIZ-ն իրավասու է սահմանափակ ժամկետով և ողջամիտ չափով բացառել կապալառուին ապագա մրցակցային մրցույթներից:

### 1.6 Գաղտնիություն

Պայմանագրին վերաբերող որևէ և ցանկացած այլ տեղեկություն, ինչպես օրինակ՝ ներկայացված փաստաթղթերը և փոխանակված տեղեկությունները, որոնք կապալառուին և նրա աշխատակիցներին հայտնի են դառնում պայմանագրի կատարման ընթացքում, պետք է համարվեն գաղտնի՝ պայմանագրի ժամկետի ընթացքում և դրանից հետո: Պայմանագրի այս դրույթը կիրառվում է նույնիսկ այն դեպքում, երբ նման փաստաթղթերն ու տեղեկությունները հստակորեն չեն դասակարգվել որպես գաղտնի:

Կապալառուն չպետք է երրորդ կողմերին հասանելի դարձնի փաստաթղթերը և/կամ աշխատանքի արդյունքները՝ ներառյալ մասնավորապես հաշվետվությունները, առանց GIZ-ից նախնական գրավոր համաձայնության: Սույն կետի նպատակների համար «երրորդ կողմեր» տերմինը ներառում է վերջնական գործարկող կողմին/հաճախորդին: Կապալառուին չի թույլատրվում օգտագործել նման տվյալներ և տեղեկատվություն կապալառուի սեփական նպատակների համար:

### 1.7 Հրապարակումների համար GIZ-ի հաստատման պահանջը

Ծրագրի շրջանակներում կապալառուի գործունեության վերաբերյալ ցանկացած հրապարակում պահանջում է GIZ-ի նախնական գրավոր հաստատում: Պայմանագրի համառոտ նկարագրությունը և կապալառուի կողմից հասարակայնության հետ կապերի աշխատանքների շրջանակը չի պահանջում GIZ-ի հաստատումը: Սույն դրույթի նպատակների համար հայտարարությունը, որը նշում է պայմանագրի առարկան և հիմնական արդյունքները, համառոտ նկարագրություն է: Կապալառուն մշտապես պետք է պատշաճ կերպով արտահայտի, որ իր գործունեությունը իրականացվում է GIZ-ի անունից, ինչպես նաև պետք է նշի վերջնական գործարկող կողմին/հաճախորդին և հետագա ֆինանսավորող կողմերին:

### 1.8 GIZ-ի կորպորատիվ դիզայնի օգտագործումը

Պայմանագրին առնչվող նյութեր նախագծելիս, որոնք նախատեսված են երրորդ անձանց հետ

օգտագործելու համար (օրինակ՝ այցեքարտեր, բլանկեր, էլ. նամակներ, հրապարակումներ, ներկայացումներ), պետք է պահպանվեն GIZ-ի տեխնիկական պայմանները: Նախագիծը պետք է համաձայնեցվի նաև GIZ-ի և պատասխանատու գործընկեր հաստատության հետ:

### 1.9 Աշխատանքի արդյունքների հետ կապված օգտագործման իրավունքներ/փաստաթղթեր

#### 1.9.1 Հիմնական սկզբունք

Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրային փաստաթղթերում, կապալառուն պետք է GIZ-ին փոխանցի իր աշխատանքի արդյունքների նկատմամբ փոխանցվող սեփականության և գույքային բոլոր իրավունքները: Եթե աշխատանքի արդյունքները պաշտպանված են հեղինակային իրավունքով կամ այլ անփոխարինելի գույքային իրավունքներով, կապալառուն GIZ-ին շնորհում է բացառիկ և անդառնալի իրավունք, որը ժամանակի, վայրի և բովանդակության առումով անսահմանափակ է՝ օգտագործելու աշխատանքի բոլոր արդյունքները, ներառյալ՝ անսահմանափակ կոմերցիոն օգտագործումը: Ստեղծողը հստակ կերպով հրաժարվում է որպես այդպիսին անվանվելու իրավունքից:

#### 1.9.2 Աշխատանքի արդյունքներ

1.9.1 բաժնի նպատակների համար «Աշխատանքի արդյունքներ»-ը բոլոր նյութական և ոչ նյութական արդյունքներն են, որոնք ստեղծվել կամ ձեռք են բերվել պայմանագրի կատարման ընթացքում, հատկապես ուսումնասիրություններ, նախագծեր, փաստաթղթեր, հոդվածներ, տեղեկատվություն, նկարապատումներ, գծագրեր, հաշվարկներ, պլաններ, լուսանկարներ, նյութեր, ֆիլմերի նեգատիվներ, պատկերային ֆայլեր և այլ տեսողական ներկայացումներ: Աշխատանքի արդյունքները պետք է ներառեն նաև ցանկացած համակարգչային ծրագիր, որը կապալառուն արտադրում, փոփոխում, գնում կամ հասանելի է դարձնում պայմանագրի կատարման ընթացքում:

#### 1.9.3 Օգտագործման իրավունքների շրջանակը

GIZ-ի օգտագործման իրավունքները ներառում են աշխատանքի արդյունքները և առկա աշխատանքային արտադրանքներն օգտագործելու իրավունքը՝ առանց ժամանակի, բովանդակության և վայրի սահմանափակման: GIZ-ն իրավասու է երրորդ կողմերին տրամադրել օգտագործման կամ օգտագործման պարզեցված իրավունքներ:

#### 1.9.4 Երրորդ անձանց իրավունքների բացառում

Կապալառուն երաշխավորում է, որ աշխատանքի արդյունքները զերծ են ցանկացած հեղինակային իրավունքից կամ երրորդ կողմի այլ իրավունքներից, որոնք կարող են վնաս հասցնել աշխատանքի արդյունքների օգտագործմանը՝ համաձայն 1.9.3 բաժնի: Կապալառուն պետք է փոխհատուցի GIZ-ին երրորդ կողմերի բոլոր պահանջների համար, որոնք բխում են 3.1 Բաժնի համաձայն օգտագործման իրավունքների շնորհումից կամ իրագործումից և փոխհատուցի GIZ-ին համապատասխան իրավական պաշտպանության հետ կապված բոլոր ծախսերը:

#### 1.9.5 Փոխհատուցում

Պայմանագրով համաձայնեցված վարձատրությունը ներառում է նաև օգտագործման իրավունքի շնորհումը:

### 1.10 Տվյալների պաշտպանություն

Պայմանագրի շրջանակներում GIZ-ը մշակում է անձնական տվյալները միայն ԵՄ տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (ԵՄ GDPR) և տվյալների պաշտպանության այլ գործող կանոնակարգերի համաձայն: GIZ-ը պահպանում և մշակում է անձնական տվյալները միայն պայմանագրի հետ կապված պահանջվող ծավալով: Կապալառուն իրավունք ունի դիտելու, ջնջելու կամ ուղղելու անձնական տվյալները և իրավասու է կապվել GIZ-ի հետ (datenschutzbeauftragter@giz.de) կամ պատասխանատու պետական մարմնի հետ՝ այդ իրավունքները պաշտպանելու նպատակով:

Կապալառուն պետք է համապատասխանի տվյալների պաշտպանության գործող կանոնակարգերի պահանջներին և միջոցներ ձեռնարկի իր աշխատակիցների կողմից այդ համապատասխանությունն ապահովելու համար:

Կապալառուն երաշխավորում է, որ GIZ-ին փոխանցված ցանկացած տվյալ մշակվել է տվյալների պաշտպանության գործող դրույթներին համապատասխան և ազատ են երրորդ կողմի ցանկացած իրավունքից, ինչը կխաթարի տվյալների օգտագործումը սույն պայմանագրի նպատակների շրջանակներում: Կապալառուն պետք է փոխհատուցի GIZ-ին տվյալների պաշտպանության կանոնների խախտման հետևանքով բխող բոլոր պահանջները և փոխհատուցի GIZ-ին համապատասխան իրավական պաշտպանության կամ պետական պատժամիջոցների կիրառման հետ կապված բոլոր ծախսերը:

Եթե տվյալների պաշտպանության գործող օրենսդրությունը պարունակում է հատուկ սկզբունքներ, որոնք պետք է պահպանվեն աշխատանք կատարելիս և ծառայություններ մատուցելիս (օրինակ՝ տվյալների պաշտպանության բարենպաստ տեխնիկական պահանջների կատարումը ապահովելու համար տվյալների պաշտպանությունը հատուկ կամ ենթադրվող մոտեցմամբ) ապա կապալառուն պետք է առաջնահերթություն տա նման սկզբունքների գործնական իրականացմանը:

Եթե կապալառուն մշակում է GIZ-ի անձնական տվյալները, GDPR-ի 28-րդ հոդվածում սահմանված կարգով, դա պետք է տեղի ունենա համապատասխան համաձայնագրի հիման վրա:

### 1.11 Ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելում և էմբարգոների պահպանում

Կապալառուն չպետք է միջոցներ կամ այլ տնտեսական ռեսուրսներ ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասանելի դարձնի երրորդ կողմերին, որոնք ներառված են ՄԱԿ-ի և/կամ ԵՄ-ի կողմից հաստատված պատժամիջոցների ցանկում:

Պայմանագիրն իրականացնելիս կապալառուն կարող հաստատել և պահպանել գործարար հարաբերություններ միայն վստահելի երրորդ կողմերի հետ, որոնց նկատմամբ չի կիրառվում առևտրային գործունեության իրավական արգելք:

Պայմանագիրն իրականացնելիս կապալառուն պետք է հետևի նաև Միավորված ազգերի կազմակերպության, ԵՄ-ի կամ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից հաստատված էմբարգոներին և առևտրային այլ սահմանափակումներին:

Կապալառուն պետք է անհապաղ և իր նախաձեռնությամբ տեղեկացնի GIZ-ին, եթե կապալառուն, իր պաշտոնական ղեկավար մարմնի և/կամ այլ վարչական մարմինների անդամը, բաժնետերերը և/կամ անձնակազմը ներառված են ՄԱԿ-ի կամ ԵՄ-ի կողմից հաստատված պատժամիջոցների ցանկում: Այս դրույթը կիրառելի է նաև այն դեպքում, եթե կապալառուին տեղյակ է դառնում այնպիսի իրադարձության մասին, որը հանգեցնում է նման ցուցակման:

Կապալառուն պետք է անհապաղ և իր նախաձեռնությամբ ծանուցի GIZ-ին սույն 1.11 կետով սահմանված դրույթների ցանկացած խախտման մասին: Վերոգրյալը չի ազդում GIZ-ի իրավունքների վրա՝ սույն Պայմանների և դրույթների 5-րդ և 6-րդ բաժիններով:

### 1.12 Համապատասխանություն նախագծի պայմանագրերին

Կապալառուն պարտավոր է կատարել միջազգային իրավունքի համաձայնագրերը, որոնք ձեռք են բերվել Գերմանիայի Դաշնային Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև և, անհրաժեշտության դեպքում, ծրագրի իրականացման համաձայնագրին, որը կնքվել է նախագիծն իրականացնող գործակալության և GIZ-ի միջև:

## 2. Կապալառուի կողմից աշխատանքների և ծառայությունների մատուցում

### 2.1 Փորձագետների նշանակում

Կապալառուն պետք է ապահովի, որ կաապալառուն և իր ցանկացած փորձագետ ունենան համապատասխան մասնագիտական և անձնական որակավորումներ, որոնք անհրաժեշտ են սահմանված առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար:

Կապալառուն պետք է ապահովի, որ նշանակված փորձագետները համապատասխանեն պայմանագրով սահմանված համապատասխան կանոնակարգերին:

**2.2 Պաշտպանիչ միջոցառումներ, առողջապահական պահանջներ և անհրաժեշտ ապահովագրական քաղաքականություններ**

Կապալառուն պատասխանատու է ապահովելու, որ կապալառուն և իր կողմից նշանակված փորձագետները համապատասխանեն Հայաստանի Հանրապետության առողջապահական պահանջներին: Կապալառուն, մասնավորապես, պարտավոր է կազմակերպել անհրաժեշտ պատվաստումները: Կապալառուն պետք է ապահովի համապատասխան ապահովագրական փոխհատուցում (մասնավորապես առողջության, հայրենադարձության և դժբախտ պատահարների ապահովագրություն): Կապալառուն պետք է GIZ-ի պահանջով ապացույցներ ներկայացնի սույն դրույթին համապատասխանության վերաբերյալ:

GIZ-ը պատասխանատվություն չի կրում կապալառուի և ծրագրի համար կապալառուի կողմից նշանակված անձնակազմի գույքային վնասի, հիվանդության, անձնական վնասվածքի կամ մահվան համար, կամ դրանց հետևանքների համար:

**2.3 Համագործակցություն այլ հաստատությունների հետ**

Կապալառուն և նշանակված փորձագետները պարտավոր են համագործակցել արտասահմանում գերմանական առաքելության, հանձնարարության երկրում աշխատող մասնագետների և հանձնարարված երկրում աշխատող Գերմանիայի Դաշնային Հանրապետության ներկայացուցիչների հետ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, բազմանդամ կամ այլ կազմակերպությունների ներկայացուցիչների և փորձագետների հետ:

**2.4. Անհաղթահարելի ուժ/ ֆորս մաժոր**

Անհաղթահարելի ուժը անխուսափելի իրադարձություն է (օրինակ՝ բնական աղետ, հիվանդության կամ համաճարակի բռնկում, լուրջ անկարգություններ, պատերազմ կամ ահաբեկչություն), որը չի կարող կանխատեսել որևէ մարդկային հեռատեսություն կամ փորձ, որից հնարավոր չէ խուսափել կամ հաղթահարել՝ կիրառելով ողջամիտ և առավելագույն ջանք, և որը կանխում է կամ խոչընդոտում է պայմանագրի կողմերից մեկին կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Եթե իրադարձությունը ծագում է պայմանագրի կողմերից մեկի պատասխանատվության տիրույթից, ապա այն անհաղթահարելի ուժ չէ:

Եթե առաջանում է անհաղթահարելի ուժ, պայմանագրային պարտավորությունները, այնքանով, որքանով դրանք ազդում են խնդրո առարկա իրադարձության հետևանքով, ենթական են կասեցման այնքան ժամանակ, քանի դեռ տվյալ իրավիճակի պատճառով ծառայությունների մատուցումն անհնար է, պայմանով, որ պայմանագրի կողմը առանց անհարկի ուշացման ծանուցի մյուս կողմին տվյալ ֆորսմաժորային իրադարձության մասին: Նման դեպքում կապալառուն պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները՝ ֆորսմաժորային իրադարձության հետևանքով առաջացած իր ծախսերը հնարավորինս ցածր պահելու և դրանք փաստաթղթավորելու համար:

Եթե ֆորսմաժորային իրադարձության պատճառով ծառայությունների մատուցումը մշտապես անհնար է դառնում, կամ եթե ֆորսմաժորային իրադարձությունը տևում է երեք ամսից ավելի, պայմանագրի կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը առանց լրացուցիչ ծանուցման: Նշվածը չի ազդի GIZ-ի՝ 10-րդ բաժնում պայմանագրի լուծման իրավունքի վրա:

Ֆորս մաժորով պայմանավորված պայմանագրի ընդհատման կամ լուծման դեպքում մատուցված ծառայությունները և կապալառուի բոլոր ապացուցված, անհրաժեշտ և անխուսափելի ծախսերը կհաշվարկվեն պայմանագրային գների համաձայն: GIZ-ը կարող է հրաժարվել ծախսերի փոխհատուցումից՝ համաձայն սույն դրույթի, եթե կապալառուն GIZ-ին չի տրամադրում բավարար ապացույցներ կամ փաստաթղթեր իր ծախսերի և դրանք նվազեցնելու համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ, կամ կապալառուն դա չի

անում անհապաղ՝ առանց ապացույցները կամ փաստաթղթերը ուշ ներկայացնելու հիմնավոր պատճառների: Ծախսերը փոխհատուցվում են միայն մինչև երկու ամիս ժամկետի համար, որը սկսվում է հաշվարկվել ծառայությունների ընդհատման առաջին օրվանից:

Եթե ֆորսմաժորային իրադարձության հետևանքով և GIZ-ի համաձայնությամբ գործունեությունը շարունակվում է պայմանագրով նախատեսված վայրից այլ վայրում, ապա պայմանագրով համաձայնեցված վճարը կշարունակվի վճարվել: Վարձատրության մյուս մասերը կշարունակվեն վճարվել պայմանագրով համաձայնեցված չափով մինչև երեք ամիս ժամկետով, եթե դրանք չեն պահպանվում կամ հնարավոր չէ խնայել, կամ ռեսուրսներն այլ տեղ չեն օգտագործվում:

### 2.5 Տեղեկատվության և հաշվետվությունների պարտավորություններ

#### 2.5.1 Հաշվետվության պարտավորություններ

Կապալառուն պետք է ճշտապահորեն GIZ-ին ներկայացնի պայմանագրում նշված հաշվետվությունների տեսակները՝ սահմանված պարբերականությամբ, համաձայնեցված ձևով և լեզվով և սահմանված ձևաչափով: Եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, կապալառուն պետք է հաշվետվությունները պատրաստի անգլերենով և դրանք ուղարկի GIZ-ին էլեկտրոնային ձևով (ինչպես MS Word-ին համապատասխանող ձևաչափով, այնպես էլ որպես pdf ֆայլ):

Հաշվետվությունների ծախսերը պետք է հաշվարկվեն որպես փորձագետների հաշվարկային դրույքաչափերի մաս և առանձին չեն վարձատրվի

#### 2.5.2 Պայմանագրի կարգավիճակի մասին զեկուցելու կապալառուի պարտավորությունը

GIZ-ը կարող է ցանկացած ժամանակ վերանայել պայմանագրի կատարման կարգավիճակը և արդյունքները, ներառյալ ծրագրի հաշիվները և ծրագրին առնչվող ցանկացած հատուկ հաշիվ: Կապալառուն պետք է հասանելի պահի անհրաժեշտ գրառումները և տրամադրի այդ նպատակով անհրաժեշտ տեղեկատվություն: GIZ-ի պահանջով կապալառուն պետք է նաև տեղեկատվություն տրամադրի GIZ-ի կողմից պատվիրված այլ հաստատություններին կամ անձանց և կազմակերպություններին, ինչպես նաև հնարավոր դարձնի աուդիտները և համաձայնի համապատասխան կերպով համագործակցել ցանկացած այդպիսի աուդիտի ժամանակ:

### 2.6 Պայմանագրի հետ կապված արձանագրումների վարում

Կապալառուն պետք է պահպանի պայմանագրի հետ կապված **արձանագրումներ**ը և աշխատանքի արդյունքները, ներառյալ ֆինանսական գրառումները, վերջնական հաշվետվության կամ, ըստ դեպքի, աշխատանքի ընդունումից հետո տասը տարի, և GIZ-ի պահանջով դրանք պետք է տրամադրի ստուգման:

2.8 Նյութերի և սարքավորումների գնում

Նյութերի և սարքավորումների պայմանագրային համաձայնեցված գնման դեպքում, 3.2.1 կետի համաձայն պահանջվող վաուչերներից բացի, պետք է ներկայացվի պայմանագրում նշված ստացողին հանձնման հաստատումը:

Գնումների պատվերները կարող են կատարվել միայն որակյալ և իրավասու մատակարարներից՝ ծախսարդյունավետ պայմաններով և մրցակցության հիման վրա: Կապալառուն պետք է ապահովի մրցույթի մասնակիցների թափանցիկությունը, հավասար վերաբերմունքը և համապատասխանությունը: Կապալառուն պետք է համապատասխանի GIZ-ի հետևյալ կանոններին rules on inventorising and handing over equipment and materials: www.giz.de/en -> Doing business with GIZ –> Procurement and financing – GIZ as a public contracting authority -> Contracts for services and construction as well as development partnerships: Contract management, invoicing and accounting procedures and on this page under Annexes: Procurement of materials and equipment:

## 3. Վարձատրություն և հաշիվ-ապրանքագիր

### 3.1 Վարձատրության սկզբունքը, վարձատրվող պարագաները

Պայմանագրում նշված գինը առավելագույն գումարն է, որը գերազանցող ծախսերը չեն փոխհատուցվում:

Բացի պայմանագրային համաձայնեցված գնից, կապալառուն կարող է վճարել ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) օրենքով սահմանված դրույքաչափով:

Պայմանագրով համաձայնեցված վարձատրվող պարագաների համար վճարվում է վարձատրություն, որը յուրաքանչյուր դեպքում առավելագույն գումարն է:

Ձեղչերը, վերադարձները, հարկային արտոնությունները կամ վերադարձները և բոլոր այլ գների նվազեցումները, որոնք ձեռք է բերվել կապալառուի կողմից GIZ-ի կողմից փոխհատուցվող ծախսերով աշխատանք կատարելիս և ծառայություններ մատուցելիս, պետք է փոխանցվեն GIZ-ին կամ հանվեն հաշիվ-ապրանքագրից:

#### 3.1.1. Վճար

Վճարը հիմնված է փորձագետի մեկ օրվա աշխատանքի վրա՝ որպես հաշվարկման միավոր (Փորձագետի օրը): Փորձագետի օրը լրիվ օր է, երբ կապալառուն կամ նրա կողմից նշանակված փորձագետներից մեկը կամ մի քանիսը աշխատանք և ծառայություններ են մատուցում GIZ-ի համար: Բացառապես ճանապարհորդության համար օգտագործվող օրերը չեն համարվում Փորձագետի օրեր:

Պայմանագրային համաձայնության դեպքում փորձագետի ժամերը կարող են օգտագործվել նաև առանձին դեպքերում վճարները հաշվարկելու համար: Ոչ մի այլ միավոր չի կարող ապրանքագրվել:

Կապալառուի վճարը կամ նրա կողմից նշանակված փորձագետների վճարը ներառում է անձնակազմի բոլոր ծախսերը, ներառյալ օժանդակ անձնակազմի ծախսերը, կապի ծախսերը, հաշվետվությունները և բոլոր ընդհանուր ծախսերը, շահույթը, տոկոսները, ռիսկերը և այլն:

#### 3.1.2 Ճանապարհածախս

##### 3.1.2.1 Օդային ճանապարհորդության կամ այլ տրանսպորտային ծախսեր

Օդային ճանապարհորդության և տրանսպորտի այլ ծախսերը վճարվում են պայմանագրով նախատեսված չափով, ընդհանուր առմամբ միանվագ, իսկ բացառիկ դեպքերում՝ ապացույցների ներկայացմամբ:

##### 3.1.2.2 Օրապահիկ

Օրավարձը ծածկում է կապալառուի կամ կապալառուի փորձագետների կացության հավելյալ ծախսերը՝ իրենց մշտական բնակության վայրից և (կամ) գործունեության վայրից հեռու հանձնարարության ժամանակ՝ պաշտոնական ճանապարհորդության մեկ օրվա ընթացքում:

##### 3.1.2.3 Գիշերակացի նպաստ

Գիշերակացի նպաստը ծածկում է կապալառուի կամ կապալառուի փորձագետների՝ իրենց սովորական բնակավայրից և/կամ գործունեության վայրից հեռու կացության ծախսերը, եթե անհրաժեշտ է գիշերակաց:

Գիշերակացի նպաստները վճարվում են միայն այն դեպքում, եթե պայմանագրով անհրաժեշտ է գիշերակացը, ինչը պետք է առանձին նշվի ժամանակի հաշվարկում:

##### 3.1.2.4 Այլ ճանապարհածախս

Պայմանագրի հետ կապված այլ ճանապարհածախսը փոխհատուցվում է մինչև պայմանագրով նախատեսված քանակի չափով, ընդհանուր առմամբ միանվագ, իսկ բացառիկ դեպքերում՝ ապացույցների ներկայացմամբ:

#### 3.1.3 Այլ ծախսեր

##### 3.1.3.1 Ենթապայմանագրեր

Ենթապայմանագրերի համար կատարված փաստացի ծախսերը պետք է փոխհատուցվեն ապացույցների ներկայացմամբ՝ պայմանագրով համաձայնեցված շրջանակում:

##### 3.1.3.2 Ճկուն վարձատրություն

Եթե պայմանագրով սահմանված է ճկուն վարձատրության կետ, կապալառուին թույլատրվում է գերազանցել պայմանագրով նախատեսված գումարները մինչև ճկուն վարձատրության հոդվածի չափը՝ պայմանագրով համաձայնեցված անհատական դրույքաչափերով և հաշվարկային հիմքերով:

Ճկուն վարձատրության կետի օգտագործումը պետք է գրավոր հաստատվի GIZ-ի կողմից՝ նախքան այդպիսի ծախսերը կատարելը:

### 3.2 Վճարման պայմաններ, ծառայությունների համար պայմանագրերի հաշիվ-ապրանքագիր

#### 3.2.1 Հաշիվների ներկայացում

Բոլոր վճարումները կկատարվեն միայն համապատասխան ապացույցների ներկայացմամբ: Բոլոր անհրաժեշտ վաուչերները պետք է կցվեն բնօրինակին:

#### 3.2.2 Ժամանակի արձանագրումը

Վճարի, հանձնարության երկրում պայմանագրի հետ կապված ծախսերը, օրապահիկի կամ գիշերակացի ցանկացած նպաստ, որը պետք է վճարվի, պետք է հիմնված լինի ժամանակի հաշվարկի վրա, որտեղ կապալառուն մուտքագրում է պահանջվող փորձագետների օրերի քանակը:

#### 3.2.3. Վերջնական հաշիվ, վերջնական վճարում

Կապալառուն պարտավոր է վերջնական հաշիվ-ապրանքագիրը ներկայացնել առանց ուշացման և, ամեն դեպքում, ոչ ուշ, քան հանձնարարականի ժամկետի ավարտից վեց շաբաթ հետո: Վերջնական հաշիվ-ապրանքագիրը կարող է ներկայացվել մինչև պայմանագրային համաձայնեցված ժամկետի ավարտը, երբ աշխատանքը կամ ծառայություններն ավարտվեն: Հաշիվ-ապրանքագիրը պետք է պարունակի կապալառուի բոլոր պահանջները վարձատրության վերաբերյալ, լինի ստուգելի և պարունակի բոլոր անհրաժեշտ տեղեկությունները (բոլոր անհրաժեշտ անդորրագրերով/վաուչերներով): Վերջնական վճարումը կատարվում է վերջնական հաշիվը պատշաճ ձևով ներկայացնելու և կապալառուի կողմից պայմանագրային բոլոր պարտավորությունների կատարման դեպքում:

GIZ-ի կողմից գերավճարված ցանկացած գումար կապալառուի կողմից պետք է վճարվի GIZ-ին առանց ուշացման՝ հաշիվ-ապրանքագրեր կազմելուց հետո:

Եթե կանխավճար է կատարվել, և կապալառուն 15 օրվա ընթացքում չի ներկայացնում վերջնական հաշիվը, չնայած GIZ-ի հիշեցմանը, կապալառուն պարտավոր է մարել կանխավճարը:

### 3.3 Վճարման պայմանները, աշխատանքների համար պայմանագրերի ինվոյինգը

Աշխատանքների համար պայմանագրերը ենթակա են 3.2 բաժնի պայմաններին՝ հետևյալ դրույթներով.

#### 3.3.1 Վճարման պահանջ

Վերջնական հաշիվ-ապրանքագիրը պետք է ներկայացվի առանց ուշացման և ամեն դեպքում ոչ ուշ, քան ընդունումից վեց շաբաթ հետո: Այն պետք է պարունակի կապալառուի բոլոր պահանջները, լինի ստուգելի և պարունակի բոլոր անհրաժեշտ տեղեկությունները (բոլոր անհրաժեշտ անդորրագրերով/վաուչերներով):

Վարձատրության վճարումը կատարվում է աշխատանքի և ծառայությունների ընդունումից և բոլոր անհրաժեշտ տվյալները պարունակող վերջնական հաշիվ-ապրանքագրի ստացումից հետո (բոլոր անհրաժեշտ անդորրագրերի/վաուչերների հետ միասին): Վճարումը պետք է կատարվի GIZ-ի կողմից ոչ ուշ, քան հիմնավորված պահանջների ժամկետը լրանալուց հետո 30 օր հետո:

#### 3.3.2 Երաշխիքային ավանդ

Եթե պայմանագրով համաձայնեցված են վճարումներ, ապա պայմանագրի համաձայն հաշիվ-ապրանքագրով ներկայացված գումարների 10%-ը (ներառյալ ԱԱՀ) պահվում է և ի սկզբանե չի վճարվում: Տվյալ գումարը կարող է վճարվել երաշխիքի տրամադրման դիմաց: Պահված գումարը պետք է վճարվի աշխատանքն ամբողջությամբ ընդունելուց հետո:

### 3.3.3 Ընդունում

Ընդունումը կատարվում է գրավոր:

GIZ-ն իրավունք ունի երաշխիքային պահանջներ ներկայացնել ցանկացած թերության համար, որոնք ակնհայտ են եղել ընդունման ժամանակ, նույնիսկ եթե այն այդ պահին իրավունք չի վերապահել նման պահանջների:

## 4. Պայմանագրի լրացումներ

Պայմանագրի կողմերը կարող են պայմանավորվել աշխատանքի և ծառայությունների ծավալի, կատարման ժամկետի և համաձայնեցված վարձատրության հետ կապված պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

Բոլոր փոփոխությունները, որոնք ենթադրում են փոփոխություններ ներածությունների ճշգրտման մեջ, ինչպես նաև փորձագետների փոխարինում և պայմանագրի այլ հիմնական փոփոխություններ, պետք է համաձայնեցվեն կողմերի կողմից գրավոր պայմանագրի լրացումների տեսքով. կատարողականի ժամանակաշրջանի փոփոխություններ, աշխատանքի և ծառայությունների շրջանակի ընդլայնում, անձնակազմի պահանջների փոփոխություններ և/կամ վարձատրության փոփոխություններ:

Կատարման ժամկետի ծախսերի չեզոք երկարացումները, առանց մուտքային տվյալների ճշգրտման փոփոխության, չեն պահանջում գրավոր պայմանագրի լրացում և կարող են համաձայնեցվել տեքստային ձևով:

## 5. Լրացուցիչ կատարում, ընդհատում և դադարեցում

### 5.1 Լրացուցիչ կատարում

Եթե կապալառուի կատարումը թերի է, GIZ-ը կարող է պահանջել լրացուցիչ կատարում. սակայն, լրացուցիչ կատարում պահանջելը այլ իրավունքներ հաստատելու համար նախապայման չէ:

### 5.1 Ընդհատում

GIZ-ը կարող է ցանկացած ժամանակ պատվիրել գործունեության ամբողջական կամ մասնակի ընդհատում, օրինակ՝ քաղաքական պատճառներով: Այս դեպքում կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ծախսերը հնարավորինս ցածր պահելու համար:

Եթե ընդհատումը տևում է ավելի քան երեք ամիս, կապալառուն կարող է խզել պայմանագիրը:

Ընդհատման կամ դադարեցման դեպքում մինչև այդ կետը մատուցված ծառայությունները և կապալառուի կողմից մինչև ընդհատման ավարտը կատարված բոլոր ապացուցված անհրաժեշտ ծախսերը հաշվարկվում են պայմանագրային գներով: Ոչ մի այլ պահանջ անթույլատրելի է:

## 4. Պայմանագրի լրացումներ

Պայմանագրի կողմերը կարող են պայմանավորվել աշխատանքի և ծառայությունների ծավալի, կատարման ժամկետի և համաձայնեցված վարձատրության հետ կապված պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

Բոլոր փոփոխությունները, որոնք ենթադրում են սկզբնական պայմանների, ինչպես նաև փորձագետների փոխարինում և պայմանագրի այլ էական փոփոխություններ, համաձայնեցվում են կողմերի կողմից պայմանագրի գրավոր լրացումների տեսքով: Սկզբնական պայմանների փոփոխություններ են՝ կատարողականի ժամանակաշրջանի փոփոխություններ, աշխատանքի և ծառայությունների շրջանակի ընդլայնում, անձնակազմի պահանջների փոփոխություններ և/կամ վարձատրության փոփոխություններ:

Կատարման ժամկետի այնպիսի երկարացումները, որոնք չեն առաջացնում լրացուցիչ ծախսեր և չեն ենթադրում են սկզբնական պայմանների փոփոխություն, չեն պահանջում պայմանագրի գրավոր լրացում և կարող են համաձայնեցվել տեքստային ձևով:

## <u>5. Լրացուցիչ կատարում, ընդհատում և դադարեցում</u>

### 5.1 Լրացուցիչ կատարում

Եթե կապալառուի կատարումը թերի է, GIZ-ը կարող է պահանջել լրացուցիչ կատարում. սակայն, լրացուցիչ կատարում պահանջելը այլ իրավունքներ հաստատելու համար նախապայման չէ:

### 5.1 Ընդհատում

GIZ-ը կարող է ցանկացած ժամանակ պահանջել գործունեության ամբողջական կամ մասնակի ընդհատում, օրինակ՝ քաղաքական պատճառներով: Այս դեպքում կապալառուն պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ծախսերը հնարավորինս ցածր պահելու համար:

Եթե ընդհատումը տևում է ավելի քան երեք ամիս, կապալառուն կարող է լուծել պայմանագիրը:

Ընդհատման կամ լուծման դեպքում մինչև տվյալ պահը մատուցված ծառայությունները և կապալառուի կողմից մինչև ընդհատման ավարտը կատարված բոլոր ապացուցված անհրաժեշտ ծախսերը հաշվարկվում են պայմանագրային գներով: Կապալառուն այլ պահանջներ առաջադրելու իրավունք չունի:

### 5.3 Դադարեցում

GIZ-ը կարող է լուծել պայմանագիրը ցանկացած ժամանակ՝ առանց հետագա ժամկետներ սահմանելու կամ թերությունների շտկման նախնական պահանջ ներկայացնելու՝ ամբողջությամբ կամ աշխատանքի և ծառայությունների առանձին մասերի կամ առանձին փորձագետների առնչությամբ:

### 5.3.1 Հիմքեր, որոնք չեն առաջանում կապալառուի մեղքով

Եթե GIZ-ը լուծում է պայմանագիրը ոչ կապալառուի մեղքով առաջացած պատճառով, կապալառուն իրավունք ունի պահանջել պայմանագրով համաձայնեցված վարձատրությունը: Այնուամենայնիվ, կապալառուն պետք է թույլ տա հանել այն ծախսերը, որոնք կամ կարող են խնայվել, ինչպես նաև տվյալ ռեսուրսների այլ վայրերում օգտագործելուց ստացված շահույթը կամ դիտավորյալ չեղյալ համարվող հնարավոր եկամուտները: Գումարները, աշխատավարձերը և աշխատավարձի լրացուցիչ ծախսերը համարվում են խնայելի, եթե դրանք վերաբերում են լուծման մասին ծանուցումն ստանալուց հետո ավելի քան 60 օր անց ժամանակաշրջաններին:

Բացառությունների դեպքում ապացուցման բեռը կրում է կապալառուն:

### 5.3.2 Հիմքեր, որոնք առաջանում կապալառուի մեղքով

Եթե GIZ-ը լուծում է պայմանագիրը կապալառուի մեղքով պայմանավորված, ապա կապալառուին պետք է վճարվի բացառապես փաստացի կատարված աշխատանքի և ծառայությունների համար է, պայմանով, որ GIZ-ն օգտագործում է դրանք՝ պայմանագրային գներով կամ համամասնորեն՝ հաշվի առնելով պայմանագրի գները և մատուցված աշխատանքներն ու ծառայությունները՝ համադրությամբ այն բանի, ինչ կպահանջվեր պայմանագրի լիարժեք կատարման համար: Ցանկացած աշխատանք և ծառայություններ, որոնք չեն կարող օգտագործվել, կվերադարձվեն կապալառուին վերջինիս հաշվին: Եթե պայմանագրի կատարումը ներառում է ծառայությունների մատուցում, ապա պայմանագրին համապատասխան մատուցված ցանկացած ծառայություն մինչև դադարեցման ամսաթիվը համարվում է օգտագործելի: Ոչ մի դեպքում փոխհատուցման իրավունքը չպետք է գերազանցի պայմանագրի ընդհանուր արժեքը:

## 6. Պատասխանատվություն, պայմանագրային տույժեր և ուշացումներ

### 6.1 Պատասխանատվություն

Կապալառուն պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով: GIZ-ը նաև իրավասու է պահանջել աշխատանքի և ծառայությունների ստացողի բաց տոնված օգուտի կամ վնասի համար՝ կապալառուի կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով:

### 6.2 Պայմանագրային տույժեր

1.4.2 (Բնապահպանական և սոցիալական չափանիշներ, մարդու իրավունքներ), 1.4.3 (Աշխատանքային ստանդարտներ) և 1.5 (Ամբողջականություն) Բաժիններով նախատեսված պարտավորությունների խախտման դեպքում կապալառուն պարտավոր է վճարել 25,000 եվրո պայմանագրային տուգանք՝ յուրաքանչյուր խախտման համար: Եթե դրամական առավելությունը գերազանցում է 25000 եվրոն, ապա կապալառուն պարտավոր է վճարել պայմանագրային տույժ՝ տվյալ դրամական առավելության գումարի չափով: Վերոգրյալը չի զրկում GIZ-ին վնասների փոխհատուցման հետագա պահանջներից: Այնուամենայնիվ, պայմանագրային տույժը կհանվի նման հետագա պահանջներից:

### 6.3 Աշխատանքի և ծառայությունների առաջընթացի ուշացումներ

Եթե կապալառուն չի պահպանում համաձայնեցված աշխատանքի համար նախատեսված ժամկետները և չի հանձնում աշխատանքը GIZ-ի կողմից սահմանված ժամկետում, ապա GIZ-ն իրավունք ունի, սահմանված ժամկետը լրանալուն պես, պահանջել պայմանագրային սահմանված ժամկետը լրանալուց հետո յուրաքանչյուր շաբաթվա կամ դրա մի մասի վարձատրության 0,5%-ի չափով տույժ, պայմանով որ պայմանագրային այպիսի տույժը չի գերազանցի վարձատրության ընդհանուր 8%-ը:

## 7. Վերջնական դրույթներ

### 7.1 Զիջման բացառում

Առանց GIZ-ի գրավոր համաձայնության պայմանագրից բխող պահանջների զիջումը բացառվում է:

### 7.2 Մասնակի անվավերություն

Եթե սույն պայմանագրի առանձին դրույթներ լինեն կամ դառնան անվավեր կամ անիրագործելի, պայմանագրի մյուս բոլոր դրույթների վավերականությունը մնում է անփոփոխ: Անվավեր կամ անգործադրելի դրույթը պետք է փոխարինվի վավեր և կիրառելի դրույթով, որի հետևանքը առավելապես կարտահայտի այն տնտեսական նպատակը, որը հետապնդվել է պայմանագրային կողմերի կողմից անվավեր կամ անիրագործելի դրույթով: Վերոգրյալ մոտեցումը տարածելի է նաև այն դեպքում, եթե պարզվի, որ պայմանագիրն ունի բացեր կամ բացթողումներ: